


ՄԱՐԿԵԼ ՄԱՐԶԱՆ


ԿՈՄՍՏԱՆ



ՀԱՅԵՏԻՅԱՆ







Մ Ո Ւ Շ Ե Ղ Ն Ա Ր Յ Ո Ւ Ն


891-99
Ն-40

ՅՏԻԳԼՍԻ Է 1961 թ.

Կ Ո Մ Ի Տ Ա Ս

ԼԻՐԻԿԱԿԱՆ ՊՈԵՄ

28870 8300
=



ԵՐԵՎԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

1946

М. НАРЯН
КОМИТАС
Лирическая поэма.
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1946



John F. Kennedy

Ն Ա Խ Ե Ր Գ

Ի՛նչ լավ է, ի՛նչ լավ գարնան օրերին,
 Ելնել հայրենի լեռները դալար,
 Ելնել, միանալ ներմակ ամպերին,
 Համբուրել ցողոտ ծաղկունքը պայծառ,
 Արբենալ մաքուր, լեռնային օդով,
 Առվակ—աղբյուրի հստակ ջրերով:

Ի՛նչ լավ է անուշ, վաղ լուսաբացին,
 Տեսնել կապույտը հայրենի լեռան,
 Երբ աչքդ, կարոտ արևի բոցին,
 Լեռներում բուսած մեխակի նման,
 Արև է տենչում ու ոսկի շողեր,
 Գգվող գեփյուղներ, անուշիկ հովեր:

Լեռներում բացվող չֆնաղ լուսաբաց,
 Ես քեզ եմ գալիս երազում հոգով,
 Արծրվի նման քեքրս պարզած,
 Կարոտ լեռների գահերին մեր մով,
 Կարոտ գետերի փրփուր շառաչին,
 Կարոտ դաշտերին, խրոխտ ժայռերին:

Գալիս եմ ես էլ, որ ծարավ հոգով
Ձեր գեղեցկության փայլով հիանամ,
Տարվեմ մեր չքնաղ, հպարտ լեռներով
Հայոց աշխարհի գուսանի նման,
Որ մի օր եկավ ու մի օր գնաց,
Իբրև վառ երագ, լեռան լուսաբաց:

Ա Ռ Ա Զ Ի Ն Ե Ր Գ

— Ե՛լ, բավ է քնես, նկարիչ եղբայր,
Ե՛լ, Արագածի գահերին նայիր.
Տես՝ գագաթները վեհ ու ճյուճափառ,
Ինչպե՛ս են ցուում պերն ու յուսալիր:

Նայիր՝ կապույտը մի բողի նման
Արևն է դանդաղ շողերով առնում,
Ոսկով է օծում պսակը լեռան,
Ոսկու և լույսի գույներ պարզելում:

Ես կանգնել էի ժայռի շրթունքին
Նվ նայում էի ու անվերջ նայում
Լեռան գագաթից ելնուլ արևին,
Կապույտ սարերին, երկնքին անհուն:

Ա՛խ, լեռան բարձունք ու Պար հայկական,
Ինչպես եմ մարդուս հոգին հմայում.
Բարձունքի վրա հայրենի լեռան
Մարդը ինչքա՛ն է, ինչքա՛ն վեհանում:

Արևն էր ծագում հայոց լեռներում,
Ու գետն էր հոսում ձորերի միջով.

Գետից մի գնդ էր մարմանդ բարձրանում,
Մեր հոգին լցնում զարնան անուրջով:

Կապույտն էր լուծվում. լեռները բոլոր
Ծիրանի էին հագնում ոսկեղեն,
Ինչպես արֆաներ վեհ ու փառավոր,
Խրոխտ զլիսներին՝ պսակ լուսեղեն:

Ծուխն էր բարձրանում դեպ կապույտն ի վեր,
Հայոց ծխանի ծուխը ծիրանի,
Ելնում էր ձգվում դեպի լուրբ երբեր,
Ուզում էր կարծես արևին հասնի:

— Նայի՛ր, մի նայի՛ր, վաճառի հարավում,
Կըտուրին նայի՛ր այն ցած խրնիքի.
Տե՛ս այն աղջկան՝ ի՛նչֆան է սիրուն՝
Մի հրեշտակ է հեռու կապույտի:

Մատուցարանը, նայի՛ր, վերցրեց,
Նայի՛ր, ցորեն է քեփահան անում.
Լեռան զեփյուրը ծամը ծածանեց.
Տե՛ս, ինչպես է նա բոցի պես վառվում:

Հատիկներն, ինչպես ոսկու բյուրեղներ,
Ցած էին թափվում շողերի միջով.
Արևն էր նրանց տալիս համբույրներ,
Գգվում աղջկան ոսկի մատներով:

— Լքսո՞ւմ ես, ինչպես, նկարիչ ընկեր,
Անուշ երգով է նա գործը անում,
Եվ հնչյունները, ինչպես բիթերներ
Թևիկներ առած դեպ մեզ են նախորում.

Լավըն ասե՛ք,
Լավըն ասե՛ք,
Իմ յարի.
Ա՛խ, սիրելուս
Վատը չասե՛ք,
Իմ յարի:

— Այս ել քեզ մի լավ, անմահ մի գույն.
Նկարըդ խնչա՛ն հարուստ կլինի.
Գեղջկուհին բանը երգով է անում՝
Օծված շողերով գարնան արևի:

Նկարիք մի թուխ և խոհուն վարպետ,
Ականջը ձենի և ուշքը լարած.
Խոսում է կարծես մուսաների հետ,
Կարծես հեռավոր մի երգով գերված:

Բարձրավիզ, վսեմ, մորուքը բարակ,
Աչքերը՝ անուշ, կրակոտ ու վառ
Ու փռնի վրա՝ ինչ որ նոր տեսանք՝
Այն լավ աղջկան՝ ծամերը երկար:

Այդպես ել արա. և՛ ռաֆերը բաց,
Եվ ծամը երկար, կըտուրի վրան
Արևի շողով շփեղ հրդեհված,
Ցորեն մաքրելիս երգով դուրսական.

— Գնա՛նք, սաավ նա ու աչքը վանքին.
Աչքը՝ աղջկան ու երգն՝ ախանջում,
Պայուսակն առավ ու գցեց մեջքին,
Ու կարծես անուշ երագի միջում,

— Գնա՛նք, ինձ կանչեց ու ժայռից իջավ՝
Գնա՛նք, ձայն տվեց զըրնգուն ձայնով,
Թե չէ կըկորչի տեսիլքը այս լավ,
Կանչեց ու բռավ եղնիկի փայլով:

Ե Ր Կ Ր Ո Ր Գ. Ե Ր Գ

Արևն անցավ, հովերն իջան,
Իրիկունն է լեռնային,
Թիթեռներն նման բռուն
Համանչները փնփռափն:

Ես՝ պատանի, վառված երգիչ՝
Դեռ երգում եմ ու երգում,
Նա՝ պատանի, վառ նկարիչ
Իմ պատկերն է ավարտում:

Ձայն ու վրձին, սիրտ ու հոգի,
Ձորի միջին, գետի մոտ,
Մինչև մուտը արեգակի
Քե՛զ եմ երգում երազկոտ:

— Նայի՛ր, Վահան, ընկերս ասավ,
Իմ ավարտած պատկերին.
Ինքը հուզված փովեց— ընկավ
Ձով գետափի կանաչին. —

Լուսաբացի ոսկի փռնին
Այն աղջիկն էր գեղանի,
Ձուլված պայծառ համանչներին
Գարնանային արևի:

Մի կողմից ել վանքն եր գծվում,
Կարմիր վանքը Հառիճի,
Հրդեհի պես մի վառվոռն,
Նման ոսկի անուրջի:

Ցածում գետն եր հոսում երգով,
Ցածում՝ կանաչ ու ծառեր.
Եվ ընկերս՝ գոց աչքերով,
Որ դեռ խաղաղ կերպեր:

Նայում էի ես նկարին
Ու հմայվում, ու նայում,
Եվ կարմրափար վեհ գմբեթին,
Որ հագիվ էր նշմարվում:

— Ա՛հ, նկարիչ դու խորամիտ,
Ինչպես ես սա հղացել.
Վանք և աղջիկ ծաղկափթիթ,
Ինչքան լավ ես հասկացել:

— Աշխարհական և հոգևոր
Իր երգերն են դրանք լուռ,
Որ այրել են գիշեր ու գոյ
Քնքուշ սիրտը, ինչպես հուր:

Ասավ պառկած ընկերս դեռ
Երազներով, աչքը փակ,
Հոգում՝ միայն պայծառ երգեր
Եվ անուրջներ անապակ:

Լցվել էինք մի սրբազան
Ըզգացմունքով անմեկին,

Նայում էի անվերջ նրան,
Նա՝ կապուտակ երկնքին:

Ձեռնք խոսում. գետը կամաց
Նրգ էր ասում մեզ համար,
Ծառերն ամեն՝ ձիգ, նորաբաց՝
Դարձած երգիչ ու քնար:

— Ու՛ր էր հանկարծ, ընկերս ասավ,
Գեթ մի վայրկյան հայտնվեր,
Նորից նստեր կանաչ ու թավ
Այս ափերին ու երգեր:

Ի՛նչ լավ բան է հրաշքը սուրբ
Ու երազը իրական,
Նրբ ամեն տենչ ունի խորհուրդ,
Ունի գաղտնիք սրբազան:

Խոսում էինք մեզմ ու երկար,
Խորեում էինք, շշուշում,
Լսում էինք միայն իրար
Ու ներսուզված՝ անըջում.

Դիտում էինք անվերջ նրան՝
Կոմիտասին հմայուն
Ու երազում նրա նման,
Նրա երգը մրմնջում.

Միայն նրան՝ Կոմիտասին,
Միայն նրան անըջում.
Գետափի ել կանաչ ուռիմ-
Նրա երգն էր շշուշում...

Շիտկվեց, ելավ ապա ոտի
Ընկերս լուռ և խռնուն,
Ծավալվում էր լուրթ կապույտի
Քողը բարակ, երկնագույն:

Ու ծանրաբայլ դարձանք նորեն,
Ելանք ժայռը քաղապատ,
Որ աստղերով վառ, լուսեղեն,
Ծաղկանց բույրով անաբատ,

Ննջենք անուշ ու փուն մտնենք,
Դարձած երազ ու երգեր,
Աստղերի տակ ձեզ վայելենք՝
Լեռան գիշեր ու գովեր:

Ե Ր Ր Ո Ր Դ Ե Ր Գ

Խաղա՛, գեփյուռ, խաղա՛,
Նրանց փունը օրրե,
Խաղա ժայռի վրա,
Հազարաբույր բուրե:

Խաղաղ ու գոհ սրտով
Նկարիչն է ննջել,
Դեմքին աստղի ցուփով
Վեհուրջուն է իջել:

Իր պատկերով տարված՝
Կոմիտասով, կույսով,
Քնել է նա դադրած,
Զեփյուռների շնչով:

Իսկ երգիչը խոռով,
Երագի մեջ ժպտում,
Խոսում է մեղմ ձայնով
Ու շշմջում, խնդում.

Երագում է նա դեռ,
Ու երագով լեռան
Բացվում է մի պատկեր
Եվ հմայում նրան.

— Կանչեցե՛ք ինձ մոտ ձայնեղ այն սանի՛ն,
Վեհափառն ասավ. և Սողոմոնի՛ն
Կանչեցին, բերին. բարակ ու վտիտ,
Կանգնեց մանուկը՝ դեմքին մեղմ ժպիտ:

Ապա մօտ եկավ ու աջն համբուրեց,
Թուխիկ աչքերը գետին խոնարհեց:
— Սօղոմո՛ն, ասավ հայրը վեհափառ,
«Ի բյուր ձայնիցը» երգի՛ր երեկվա.
Երգի՛ր, մի՛ ֆաշվիր, իմ անուշ որդյակ,
Դեռ ականջումս է քո ձայնը հստակ:

Շոյված ու շիկնած մանուկն՝ քսկսեց.
Վեհափառ հայրը ականջը լսրեց,
Սդալեց ներմակ մորսւմը շֆեղ,
Ցուլացին աչքը վառ ու նանանչեղ.

Ժպտաց ու ձգվեց. գլուխը հակեց:
Մանուկն էր երգում հուզումով մի մեծ,
Երգում էր, երգում սևաչվի տղան,
Բայց ինչքան հուզիչ ձայնով մանկական.

Ասես երկնից մի անմեղ հրեշտակ
Երկիր եր իջել և ձայնով բարակ,
Հրեշտակային ձայնով դյուքական
Երգում եր հայոց այդ երգն անմահան...

Քար էին կտրել ու դարձել արձան
Երեց, վարդապետ, հայրեր սրբազան.
Իսկ վեհափառի արցունքներն հատ-հատ,
Ինչպես գարունքվա շողեր անարատ,
Գլորվում էին ներմակ մորուքին
Եվ ալեկոծում սիրտըն ու հոգին...

Ինչպես որ հանկարծ քնից արթնանան,
Ինչպես մի երագ, տեսիլք անմահ,
Երգը վերջացավ, հալվեց, և օդում
Դեռ հնչյուններն են թեթև դողդողում:
— Մո'տ եկ, որդյակս, վեհափառն ասավ,
Սրբեց արցունքը մորուքից իր բավ.
Այս ի՞նչ ձայն ունիս, ի՞նչպես ես երգում,
Ինչպես ես մարդու սիրտը փոթորկում:
Ասավ ու գրկեց դողդոջ ձեռներով,
Գրկեց, համբուրեց ջերմագին սիրով:
— Ամեն շաբաթ օր այսուհետ կգաս,
Ինձ համար կերգես. իմացա՞ր, տղա՛ս:
Շրկենեց մանուկը. աչքերը կրկին
Խոնարհ ու անմեղ հառեց հատակին:
— Ի՞նչ է, չե՞ս կարող, չե՞ս կարող, տղա՛ս:
— Վեհափառ, ասավ տղան հագիվ հագ,
Կըգա՞մ, կարող եմ. խնդրում եմ միայն
Թողնե՛ք՝ ընկերիս գյուղը հյուր գնամ:
Եվ ինձն է խնդրում, և ես եմ ուզում.
Ասավ, գսպելով տագնափ ու հուզում:

—Գնա՛, որդյակս. ուզում ես՝ գնա,
Բայց շատ երգ չասես՝ ձայնդ փչանա:
Եվ մանուկն անմեղ հուզումով մի խոր
—Վեհափառ, ասավ, դանձամ, ամեն օր
Կերգեմ ձեզ համար. ու աջն համբուրեց
Ու ծիծառի պես դեպի դուրս քեց:
Վազեց դուրս. գավթում Հակոբին գտավ,
Փաթաթվեց, գգվեց ու կգամ, ասավ.
Թողեց, որ գյուղ գամ, ասավ հուզումով.
Եվ բռնկոտեցին հովի քեվերով:
Խաղացին անհոգ, գվարք երգեցին.
Մանկության օրե՛ր, օրե՛ր քնեցա՞ցին...
Իսկ վեհափառը նրան իրիկվան
Նվիրեց հայոց մի լավ երգարան.
Գրքի հետ՝ նաև մրգեր պատվական՝
Վառվառն ծիրան, կեռաս հուրհրան:
Կերան, երգեցին և առավոտյան
Բռնեցին գյուղի երազած նամբան:

Զ Ո Ր Ր Ո Ր Գ Ե Ր Գ

—Ի՛նչ լավ է, Հակոբ, գիշերը գյուղում,
Ինչքան շքեղ են աստղերը շողում.
Նայիր՝ ծառերը հանդարտ սվավում,
Կարծես թե երգ են հովին փափսում,
Խոխոջը լսիր հեռու գետակի՝
Ինչքան նման է անուշիկ երգի:
Հապա կալը ձեր, ցորենը հապա,
Եզները ինչո՞ք, առողջ ու հսկա...

Երկու մանուկներ աստղերի տակին,
Երկու աստղիկներ՝ խրեիքի կտրին,

Յրագում, անհոգ խոսում են երկար,
Հովն է փախցրել նրանց բունը սար:
Աստղերն են նրանց լուսեղեն ժպտում,
Աստղերը վերից նայում-հիանում:

— Սո՛ւս, ձայն չհանես, Հակոբը ասավ.
Կես գիշեր է խոր. հայրիկս ելավ.
Լուսնյակ գիշեր է. գիշերն էլ կրկին
Կալը ծեծում ենք աստղերի տակին:
Այսպես է գյուղում. սո՛ւս, ձայն չհանես,
Սո՛ւս, որ հայրիկս երգերը լսես:
Դու քեզ ես տեսել, մի հորըս լսիր՝
Ի՛նչպես է երգում մեղմ ու սրտալիր:

Եզները եկան մեծ ու գեղեցիկ.
Շարժելով իրենց պոչերը ծաղիկ.
Կալի եգերժին եկան-կանգնեցին,
Դիշերվա գովը խորունկ շնչեցին
Եվ կուշտ-կուշտ կերան ցորենը կալի՝
Օծված ցովֆերով արծաթ աստղերի:

Կալը ըսկավեց. խաղաղած գյուղում
Միայն աստղերն ու լուսինն են շողում,
Մեկ էլ գեփյուռը հեռու լեռներից
Բերում է ծաղկանց բույրերը անբիծ:
— Մի լըսի՛ր, լըսի՛ր, հայրըս ըսկսեց.
Ու Սողոմոնը ականջը լարեց.

— Լուսնակն անուշ, հովն անուշ,
Շինականի բունն անուշ:
Ծագեց լուսնակն երկնուց,
Հովը՛վի փողն էր անուշ:

Դաշտեր, ձորեր մընջեր են,
Ջրեր գլգլան, ձենն անուշ:
Անմահական հոտ բուրբեր,
Բափուր վարդի հոտն անուշ:

— Երա՞գ է արդյո՞ք. լեռնային գյուղում
Ի՞նչ ֆնֆուշ երգ է կալվորը երգում:
Ու լուսնակն անուշ, անուշ կցոլա,
Ու հովն է խաղում լեռների վրա,
Ջրերն են հեռվից մեղմով գլգլում,
Ու ծաղիկներն են փաղցրաբույր բուրում:
Ննջել են, ֆնել դաշտեր ու լեռներ,
Բայց Սողոմոնը երազում է դեռ:
Երազնե՛ր, երգե՛ր հայկական գյուղում:
Անուշ ընկերն է սրտագոհ ժպտում.

— Լսեցի՞ր, հայրըս ինչպես է երգում.
Վարն էլ, ու փաղն էլ երգով ենք անում:
Խոսում են երկար. հովը լեռների
Տարել է փունը նրանց աչքերի.
Ու Սողոմոնը, տարված-վերացած,
Հանում է ծոցից նվեր ըստացած
Երգարանն հայոց քավշակազմ, շփեղ
Եվ թերթում մանկան հուզումով անմեղ:
Ի՞նչ էր որոնում, ինքն էլ չգիտեր,
Կալվորի ե՞րգն էր հոգին կախարդել,
Թե՞ աստղերը վառ, գիշերը գյուղում.
Ա՛խ, նա չգիտե, նա չի իմանում:

Գիշեր է խորին, գիշեր խաղաղած,
Լույսով ու երգով, բույրերով լցված:
Աստղերն են ժպտում, ու հովն է խաղում,

Առույգ եզներն են համաչափ մրնչում:
Աստղերն են հալվում, ու լույսն է բացվում,
Դեռ մանուկներն են աստղերին ժպտում:
Անգին մայրիկի համբույրի նման,
Թեթև, ծաղկաբույր գեփյուռը լեռան,
Գգվում է անուշ, փայում-գուրգուրում,
Նրանց հեֆյաթի աշխարհը տանում:
Եվ մանուկների աչքերը կամաց
Փակվում են՝ մեղմիվ ֆնով պարուրված:

Մի հավի ծղրտաց, նչաց ու անցավ,
Ու երգիչն հանկարծ երազից ելավ:
Լուսնակ գիշեր է. ընկերն անխռով
Քնել է հանգիստ ու խաղաղ ֆնով:
Միայն աստղերն են ցուցուում անփուն,
Կարծես թե իրենց նինջըն են հսկում:
Ի՞նչ լավ երազ էր. պառկում է կրկին, —
Մի նոր երազ է պարուրում հոգին:

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Ե Ր Դ

Անցան տարիներ, և ի՞նչն է մնում,
Ի՞նչը չի անցնում անցավոր կյանքում. —
Ե՛վ սեր, և՛ պատիվ, և՛ փառք մեծանուն.
Լոկ դու ես մնում, ո՛վ երգ-սրբություն:

Տարիներ հետո ձայնեղ սյն տղան
Դարձավ պատանի, դարձավ այր հասուն,
Բայց անջինջ մնաց գիշերը ամռան,
Կավորի երգը՝ գիշերվա գրկում:

Վանքումն է կրկին. թիթեռի նման
Թփից թուփ անցնում ու վարդ է փաղում,

Հսում է անուշ երգերը ծիծռան
Եվ ֆքի տակին կամաց մըմնջում:

Ո՛հ, միայնությո՛ւն բնության գրկում,
Ծաղիկների մեջ ու պերն ծառերի,
Դու ես վայելքը, փառքը գերագույն
Վայելքների մեջ ամբողջ աշխարհի:

Վառվռուն, կարմիր վարդերը ձեռքին,
Նա խուցն է մտնում՝ մի համեստ սենյակ,
Ականջը՝ թռչնի սրտահույզ երգին,
Աչքը՝ Մասիսին սեգ, հրապսակ:

Մեռնում է արփին. ու փոքրիկ այգում
Շողերն են մարում ծառերի գառին,
Ծիծեռնակներն են օդի մեջ սուրում
Անհոգ, անտարբեր արևի մահին:

Սև է հանդերձը ծիծառի նման,
Կոմիտաս է արդ՝ միաբան վանքի,
Եվ Մասիս արփին բոց ու հուրհրան
Այրում է սիրտը, նման վառ երգի:

Զյունների վրա արևն է շողում,
Շափաղն է խփել ամպերի լանջին,
Եվ նուրբ ու աճող կապույտն է իջնում
Նման հեռավոր, հեռու անուրջին:

— Դա՛նգ-դի՛նգ, զարկում են զանգերը վանքի,
Փամ է իրիկվա, զանգերն են հնչում.
Իսկ Կոմիտասը մութում սենյակի
Դեռ մի կիսավարտ երգ է մըմնջում:

Ելնում է ապա և խարխափելով
Վառում է ձեթի կանթեղը իր հին.
Ծանր զանգերի ծանր զարկերով
Դաշնակի առջև նստում է կրկին:

Մռայլ մխում է լամպարը իր հին,
Իսկ պատուհանից՝ նեղ ու նրկարուն՝
Հովերն են խաղում գով ու լեռնային,
Անուշ աչքերը, ձեռները գգվում:

Խավարն է տիրում. Մասիսը լուծվում,
Զուլվում է անտես քեին խավարի,
Ամբողջ աշխարհը խավար է թվում,
Խրցի նրագը՝ աչքը աշխարհի:

Ելնում է ապա, դաշնակը թողնում
Եվ մեկնելով է ծաղկազարդ գորգին.
Արտուտի նըման երգը թռչկոտում,
Զի ուզում մնա մատների տակին:

Երազում է լուռ. աչքը կիսափակ
Ընկնում է ահա դիմացի պատին.
Մի հուր է ցոլում աչքերում հստակ,
Բարձրանում ոտքի, կանգնում է լռին.

Մեծ շրջանակից իրեն է նայում
Բարի ու քեզում իր մայրը մեռած.
Ու այդ նկարից մի վեհ ջերմությամբ
Գալիս-լցվում է սրտի մեջ հուզված:

Նստում է նորից, երկար մատներով
Դաշնակ նվագում ու հետն էլ երգում,

Մենակ, անընկեր, մութի քեերով,
Որ մայրիկի պես գգվում է, շոյում:

Ու ժամե՛ր, ժամե՛ր ու ժամե՛ր երկար
Անցնում են դանդաղ, աննկատ, անտես-
լամպարն է մխում թույլ ու հեասպա-
հեռավոր հուշի մի կրակ ինչպես:

Գրում է, երգում. մի շաբաթ չկա,
Ինչ շրջեց գյուղեր հեռավոր ու մոտ.
Ամառ էր պայծառ, օրերն արևկա,
Եվ գով, լուսալի, չֆնաղ առավոտ:

Մի մատաղ աղջիկ բամբակի դաշտում
Քաղհան էր անում ծիր ու հռանդով
Ու ֆաղեանի հետ սրտալի երգում,
Օծված արևի ոսկեղեն ցոլփով:

Ազատ բնություն, պայծառ առավոտ,
Եվ ներմակ, անծիր բամբակի դաշտեր,
Լուսեղեն, ծփուն, ֆնֆուշ ու շաղոտ
Եվ գլխի վերև՝ արտուտ ու եթեր:

Ու անցավ ապա ծիրանի այգին.
Մի մատաղ աղջիկ ծիրան էր ֆաղում,
Ամեն ֆաղելիս հիշում էր յարին
Եվ ծիրան այտին արտասուք մաղում...

Խոռով է հոգին. գրում է, երգում,
Բայց մայրամուտի ճանաչի նման
Հնչյուններն արագ քաֆչում են, կորչում,
Լուծվում է նորից երգը դյուքական:

Ջընջում է, գրում, վերստին երգում.
Աղջկա երգը, երգը բնության,
Կորչում է կրկին, կրկին թափնվում
Արևի ոսկի նաճանճի նման:

Ու թիթեռ բոնող երեխի նման
Երգում է անվերջ, երգով է հուզվել.
Ժամեր են անցնում, երգը դյուրական
Սառել է, պաղել, կիսատ մնացել:

Ո՞ր ժամն է արդյոք. գիշե՞ր է դեռ խոր,
Թե՞ արշալույս է ոսկեցուլ ու վառ.
Խաղում է հոգնած դեմքին լուսավոր,
Մի ֆնֆուշ ժպտի նառագայթ պայծառ:

Գտա՛վ. խանդավառ դաշնակն է զարկում,
Ծիրանի երգը երգում մեծաճայն.
Կրկին մի շողֆ է մատներին խաղում
Չարանքն մի համբույրի նման:

Կանթեղն է մաքում. նայում է լամպին,
Ա՛հ, մարում է նա ու աղոտ մխում.
Դառնում է, նայում՝ նեղ պատուհանին
Ու ինքըն իրեն սրտագոհ ժպտում:

Առավոտ է վաղ. գիշերն է անցել,
Ի՛նչպես է անցել գիշերը երկար,
Որ բնավ, բնավ չի էլ զգացել
Ամբողջ գիշերվա ժամերը խավար:

Նստում է դարձյալ և դաշնակ զարկում.
Ձով առավոտվա աղբյուրի նման

Ծիրանի ֆնֆուշ երգն է կարկաչում,
Հոսում է, գնում մեղմ ու դուրեկան:

Նորից նախանշն է մատներին խաղում,
Մխում է լամպը թույլ ու կիսաբոց.
Ելնում է գվարթ և լամպը մաքուր,
Ցուլում է խուցը լույսով ոսկեգոծ:

Դանդաղ բանալով դուռը սենյակի,
Մտնում է պարթև Մանուկը ժպտուն՝
Վեհ Աբեղյանը, որին հայ վեպի՝
«Սասնա Ծռերի» կրակն է լափում:

— Մանո՛ւկ, որտեղի՞ց և այսպես կանուխ,
Դավիթ-Մեհերի վե՞պն են ավարտել.
Խոսում է գվարթ, իսկ աչքերը թույլ
Ծիրանի երգի կրակն է վառել:

— Նվագիր մե՛կ էլ, մե՛կ էլ, Կոմիտա՛ս,
Ես լսում եմ սանդուխֆի տակին.
Սիրում եմ լսել ես քեզ հանապազ, —
Հայոց երգերը, քո ձայնը անգին:

Նորից ոսկեգոծ խուցը վարպետի
Լցվում է երգով, բույրով ծիրանի,
Զուլով ու հովով վաղ առավոտի,
Մեղմ հնչյուններով հայկական երգի:

Հավում է երգը. նրանք միասին
Պարտեզ են իջնում, պարտիզում նստում
Հսկա և թավուտ մի կաղնու տակին,
Որի մոտով մի ջրբիկ է գնում:

— Կոմիտա՛ս, մեղմով Մանուկն է ասում,
Նայի՛ր, քե ի՛նչ եմ գիշերըս խորհել.
Ես էլ այս գիշերն անցրի անփուն,
Ես էլ գիշերըս աչքս չեմ գոցել:

Ու պատմում է նա իրեն նարահյուս,
Իրեն նորագյուտ վեսլը Դավիթի.
Կոմիտասն, ինչպես պայծառ արշալույս,
Բացվում է, շողում գույներով վարդի:

— Ազգային երգե՛ր ու վե՛պ հոյակապ,
Ինչե՛ր մենք չունենք, ինչե՛ր և ինչե՛ր.
Խոսում են երկար, նայում անաբատ,
Զինչ յիփներին, գերթ կաղնի ծառեր:

Ու կյանքը նրանց մի գետ է թվում,
Ու երգը՝ մի գետ՝ հավիտյան հոսակ.
Խորհում են նրանք, երկար մտորում
Վաղ լուսաբացին՝ կաղնի ծառի տակ:

Առավոտն արդեն ցուում է, ծագում,
Ու լույսն է բացվում, արև է արդեն.
Իրենք էլ՝ զարնան պայծառ շողերում
Կարկաչող երկու գետեր լուսեղեն...

Մի բարակ, բարակ, մի փաղցր ձայնից
Նրգիչը դանդաղ քնից արթնացավ.
Կրկին ասողերն են ցուում երկնից,
Գիշեր է խորին, մեղմ, լուսաթաթավ:

Մի սայլ էր անցնում ժայռի փեշերով,
Սայլվորն էր երգում գիշերում խորի՞ն,

Երգը ծփում էր նուրբ հնչյուններով,
Ելնում ու խաղում լեռների գաւիթ:

Նկարիչն անհոգ քնել է խաղաղ,
Գոհ իր նկարից ու ձիրքից իր վառ.
Ո՛հ, ի՛նչ անուշ է լեռան օդը պաղ,
Գարնան աստղալի գիշերը պայծառ:

Ու քուն է մտնում երազի թե՛վով,
Ու քուն է մտնում երգիչը, քնում.
Ու կրկին ահա անուշ երազով
Մի նոր պատկեր է աչքին հայտնվում:

Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Ե Ր Գ

Ո՛վ մայր-բնություն, աղբյուր ներշնչման,
Բնության երգեր, բնության ոգի,
Առու, ուռիներ, սարեր հայկական,
Զեփյուռ, դու շունչը բնության երգի:

Ողջ բնությունը համերգ է չֆնաղ,
Ու երգ է չֆնաղ բնությունն արար,
Երգով է ծագում արփին ոսկեշաղ,
Երգով են ելնում և աստղերը վառ:

Լսե՛լ ե՛ք՝ ինչպես հովը լեռնային
Երգեր է ասում խոնարհ ուռենուն,
Ինչպես զարկելով սիգապանծ ժայռին,
Երգով է գնում փրփրաբաշ առուն:

Տեսե՛լ ե՛ք՝ ինչպես բարդին սպիտակ
Երգով է խշշում իրիկվա մութում,

Նուրբ տերևները դառնում են կրակ,
Ինչպես հեռավոր, ոսկի հեփյաթում:

Երբ ամպերն անգամ ամառվա տապին
Հովի երգով են անուշ զով անում,
Թևերը տված երգասաց հովին
Լողում են ազատ, լազուր երկնփում:

Լեռնե՛ր հայրենի, հայրենի ջրե՛ր,
Երգեր հայրենի ու գյուղեր խաղաղ,
Սիրում եմ անգամ դեպի լուրթ եթեր
Թևածոդ ձեր մեղմ ծուխը կապտաշաղ:

Եվ ֆե՛զ, ֆե՛զ ինչպես, ի՛նչպես եմ սիրում
Քանաստեղծ դու վեհ, բնության որդի,
Դու բնության պես խորունկ ու անհուն,
Շինական եղբայր, հատորն իր սրտի...

Մըմնջում էին նրանք երկուսով
Լռվա ձորերում, ծաղկունանց միջում,
Տարված բնության հրաշֆ պատկերով,
Հայոց աշխարհի այգը անըրջում:

Ու ցերեկն ամբողջ շրջեցին այդպես,
Իրիկամուտին հոգնած տուն դարձան,
Նույն երազներով, խոհերով հրկեզ,
Ծրկու անբաժան աստղերի նման:

— Հովհաննե՛ս, ասավ Կոմիտասը թուխ,
Գիտես, ես շա՛տ եմ սիրում գյուղը մեր,
Հայոց սարերը վեհ ու երկնամուխ,
Գլխներին դրած ճյուրնե պսակներ: —

Եվ շատ եմ սիրում արոր ու գուրան,
Ծիրանի, ուռի, հովասուն ամպեր.
Դու քիչ ես սիրում կալերը ամռան,
Քաջալանջ հոտաղ և առույգ եգներ:

Քո Լոռին ի՜նչքան, ի՜նչքան ես սիրում
Ձորերը խորունկ, ծաղկունքն աննման,
Ամեն անկյունը դրախտ ես անհուն,
Զուգված գեղերով հագար-հագարան:

Խոսում եր հուզված Կոմիտասն այսպես
Վառվող աչքերով, հենված մութափն,
Աչքերը հառած մեղմ, երագատես,
Մեծ Թումանյանի լուսեղ աչքերին:

— Կոմիտաս, ասավ Թումանյանը մեծ,
Թե ինձ ես հարցնում՝ իրավը կասեմ.
Քո «Գուրաներգը» հոգիս կրակեց
Իր պայծառությամբ, գույներով վսեմ:

Ով ունի մաքուր, անաբատ հոգի,
Նա միշտ կսիրի երգը բնության.
Մենք էան երգը հայոց աշխարհի,
Ուռի, ծիրանի և կալ ու գուրան:

Բա սարերը քո սեգ ու հովասուն,
Երբ դարդից վառված, այրված սրտով
Նրանց ես միայն քո երգը ասում
Ու դարման խնդրում, գուրգուրող մի հով:

Ոչ ոք գեղջուկի հոգին իմաստուն,
Գեղեցիկ հոգին այնպես չի երգել,

Ինչպես դու, ա՛խպեր, քու նոր երգերում,
Որ նոր ես միայն լույս աշխարհի հանել:

Գյուղում տեսել եմ միայն կեդտ ու ցեխ,
Հորթի ու կովի ու եգան բառաչ,
Թախծալի աչքեր, հնամաշ տրեխ,
Եվ մերկ ու կեղտոտ սրունքներ ու լանջ:

Բայց ե՞ս ե հայոց աշխարհքը անուշ,
Է՞ս ե մեր գյուղը լեռների գրկում,
Եվ արտերը մեր թավ ու ծաղկանուշ,
Վանքերը շֆեղ, երկնքի հանգույն:

Բնության գրկում, բնության որդի,
Հայ շինականն ե գարունը սիրում,
Թրթիռը աստղի, վաղ առավոտի
Շֆեղ ծագումը հայոց լեռներում:

Լուսնակ ու հովեր, ջրեր ե սիրում,
Կապույտ լեռների ջրերը փրփուր,
Ցորնի արտերը վառ ու ոսկեգույն,
Ամռան արևը կենսատու և հուր:

Բայց եդ ամենի, բոլորի վրով
Մի մեղմ թախիծ ե նստած երևում,
Ինչպես որ գարնան մաքուր երկնքով
ձերմակ ամպերի ըստվերը սիրուն:

Դա վիշտն ե հայոց, թախիծը տխուր,
Տարագիր հայի կարոտը անուշ,
Որ թողած իրեն երկինքը լագուր,
Դնում ե հեռուն՝ աչքերը մշուշ:

Բուն աշխարհում էլ հայի վեհ հոգին
Կարիքն է մաշում, հարկը անըսպառ,
Զալում հարուստը, խավարն սիւսգին,
Մեկ էլ՝ բանտերի պատերը մըքար:

Բայց թե հայ հոգին և էդ բոցերում
Մնում է վսեմ, մնում է պայծառ,
Կրկին ծիրանի, ուռի է երգում,
Նրգում է կալի ցորենը արդար,

Ինչքան վսեմ է էդ հայի հոգին,
Ինչքան լայն ու խոր, ինչքան իմաստուն,
Ի՞նչ լեհ սրտով է նայում աշխարհին
Իր սարերի պես վեհ ու երկնագույն:

Հայը երգ ունի, ու հոգի ունի,
Քաղաքներ ունի մեծ ու գերազանց,
Էդ հոգին, նման աննառ անհունի,
Լոկ էն է սիրում ինչ վեհ է, անանց:

Զայրացել ես դու, որ քո համերգին
Գրել են մարդիկ խեղճ ու չարսդավ,
Թե քո երգերից իրենց՝ քրեքին
Միայն մեր գյուղի գովի հոտն հասավ:

Ի՞նչ արած, աշխարհ, թող թերթն էլ գրի.
Մարդ կա, որ հայոց գյուղի մասնելիս
Աչքը չորս արած միայն գամերի
Շարանն է տեսնում տեան բուրելիս:

Բայց հովին-գովին, ցողին ու շողին
Նրա խեղճ հոգին օտար է մնում,

Անմասն է մնում գեղջուկի երգին,
Որով մեր սիրտն ու երկինքն են լցվում:

Անմասն է մնում մանկալի երգին,
Հոտաղի երգին՝ կապույտի միջում,
Աստղերի ցուփն. անտառի բույրին,
Փունջ-փունջ ծաղկունանց՝ լեռների լանջում:

Դու մի՛ վրդովվիր, դու լա՛րձը ձենով
Էդ երգը երգիր հայության համար,
Ինչքան էք տեսնես սրտեր՝ լի մաղձով,
Թրված հոգիներ, նենգ ու ապիկար:

Երգը, ջրի պես գույալ ու անչար,
Ճամբա կբանա և նրանց հոգում,
Կծագի մի օր արևը ֆո վառ,
Կըքնդա երգըդ հայոց աշխարհում:

Ասավ ու ելավ, գգվեղ ձեռներով
Դրկեց, համբուրեց աչքերը անուշ,
Ու հեն համբույրով, գերք հովի քեզով,
Ցրեց ու վանեց ամպեր ու մշուշ,

— Դե՛հ, երգի՛ր, ախպե՛ր, մե՛կ էլ ըսկսիր
Հայոց սարերի են երգը սիրուն,
Մեկ էլ են հայոց սարերը երգիր,
Երգով է մարդուս հոգին վեհանում:

Նա մի ամպ էր քույր ու հեն համբույրով,
Թուխ ամպը նման հանունչով օծվեց,
Եվ մեղմ, սրտալի մի անուշ ձայնով
Հայոց սարերի տաղը ըսկսեց.

— Հո՛ւ արե՛ք, սարեր ջան, հո՛ւ արե՛ք,
Իմ դարդին դարման արե՛ք,
Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում:

Ամպե՛ր, ամպե՛ր, մի քիչ գով արե՛ք,
Վարար անձրև քափե՛ք, ծով արե՛ք,
Գե՛շ մարդու օր-արևը
Սև հողի տակով արե՛ք:

Ու հուզվել էին երկունսն էլ երգով,
Արտասվում էին ամպերի նման,
Էն ամպի նման, որ հայ երկնքով
Ցողեր է շաղում տապին ամառվան:

Նորից խոսեցին երկար ու երկար,
«Անուշի» մասին, «Սասնա ծռերի»,
Եվ Պոլսի մասին, որ պիտի գնար
Կոմիտասն այնտեղ քե՛վով երգերի:

Սենյակում արդեն լուռ կիսախավար,
Կապույտն էր տիրում, կապույտն էր ծփում.
Ու խորհում էին այն օրը պայծառ,
Նրբ հայն հասկանար իր երգը անհուն.

Աշխարհն իր սիրեր լեռների լանջին,
Առուն և ուռին, ծիրանի այգին,
Կարոտեր իրեն լեռների շնչին,
Էդ շնչով սներ իր խորունկ հոգին...

Յ Ո Թ Ն Ե Ր Ո Ր Դ Ե Ր Գ

Պատերազմ: Կրկին արշունոտ դավեր
Արշունոտ սրով բերվել են հանդես,

Դըժոխք եմ դարձել փաղափ ու գյուղեր,
Աշխարհը՝ դարձել արշուճուտ կրկես:

Վիշապն է ելնում տանկի աշխարհից,
Ինչպես ահավոր, ահեղ յաթաղան,
Ծուխ ու կրակ է քափում ուռնգերից,
Որ քեզ հոշոտե, իմ մայր-Հայաստան:

Ե՛լ ըսպառագեն և խոր հավատով,
Իմ վեհ ժողովուրդ, ե՛լ հերոսաբար.
Շատ վիշապներ ես ջնջել քո գարկով
Եվ միշտ մնացել մեծ ու վեհափառ:

Ե՛լ, արևատենչ, իմ հայ ժողովուրդ,
Թե՛ գա՝ գա՛րկ նրան, որ ազատ մնաս.
Քեզ բնությունն է տվել մեծ խորհուրդ,
Եվ Հայկն է տվել քեզ կյանք ու երազ...

* * *

Բոց վերջայույս էր, և արեգակի
Ահեղ հրդեհն էր ծովում հուրհուրում,
Հրդեհում կորավ մրմունջը երգի,
Մանկան պես խեղդվեց ծովի ջրերում:

Չար ու չարաշուփ մի մղձավանջով
Ամպերը իջան ջրերի լանջին,
Ու հողմը շաչեց դիվական շնչով
Ու մղում տվեց ծովի շառաչին:

Մի տանիկ գինվոր մոտեցավ մռայլ.
— Ծովափին ի՞նչ ե՛ք դիտում լշարունակ.
Հառեց աչքերը մութ ու չարափայլ,
Մըթին աչքերում՝ բռնկված կրքակ:

—Դե՛, շուտ տուն չըփվե՛ք, գոռաց գայրույթով:
Ու ելան ոտի պետերը երգի՝
Մեծ վարուժանը և Սիամանթոն,
Խորհե՛լով բախտը հայոց աշխարհի:

Եվ նրանք իրար հրաժեշտ տվին
Ու լուսնի լույսով գնացին դանդաղ,
Ծանր ու տարտամ ֆայլեցին լոին,
Հեռացան անխոս, խոհուն, գլխակալս:

Կոմիտասը լուռ բարձրացավ սենյակ,
Նստեց մտացիք, աչքերը փակեց.
Հիշեց Հառի՛նը, գետը սառնորակ
Եվ աղջիկների շուրջպարը շֆեղ:

Հիշեց՝ Հակոբին, գիշերն անմոռաց,
Եվ կալի երգը, նրա հայրիկին.
Գիշերն՝ աստղերի լույսով նառագած,
Ծավալված գյուղի հին տան կտուրին:

Քննույշ մայրիկին ու հորը հիշեց,
Հայրենի գյուղը՝ Բոսֆորի ափին.
Սմեն բան մահվան գերանդին հնձեց,
Իրեն՝ դեռ մանուկ՝ հանձնեցին վանֆին:

Հիշեց «Անուշը». հիշեց ու ժպտաց,
Իր սանիկներին, բեմը լուսավոր,
Ու նրան այնպես մի վայրկյան թվաց՝
Խու՛մբը երգում է՝ «Աղջի բախտավոր»:

Սեա և Սասնա ֆաջերն հաղթական,
Դավիթը ահա՝ զրահը հագին,
Արեգակի պես, բոցերով վառման,
Դռնում է,—«Ձե՛մ տա մեր հայոց ոսկին»...

Հուսնյակի մի շող սենյակը ընկել
Ու ծավալվում էր ալիքի նման,
Ուզում էր կարծես այն խոսքը լսել,
Որ մրմնջում էր երգիչը-հման:

Գիշեր էր արդեն. հոգնած ու հուզված
Անհուն քիկնել էր շորերը հագին.
—Վարդապետ, լավե՞ց. լավե՞ց, բե՞. բվաց.
Ու աչքերը փակ խորհում է կրկին:

—Վարդապետ, լավեց դրսից մի բամբ փայլ:
Կոմիտասն այն ժամ լուռ ելավ ոտքի.

—Օ՛, իմ Աստուծո, օ՛ իմ Վարդուծան,
Ներս եկե՛ք, դու՛ք մեծ ասպետներ երգի...

Ներս մտան: Մի խոր, ծանր տխրությամբ,
Վարդուծանն ասավ. սիրելի եղբայր,
Կախվել է հայի գլխին մի սև ամպ՝
Թուրքը սրել է սուրը ջարդարար:

Գավառները ողջ արյուն են կտրել,
Մորթում են-ջարդում բոլոր հայերին,
Տանիկ գորգերը Կարսին են հասել,
Կընչվի, կերթա Արարատն անգին:

—Պետական ռեհի՞ր, ընդհանուր մի ջա՞րդ,
Մեծ Կոմիտասը հարցրեց կրակված.
Իսկ եվրոպացին՝ խարդալս ու տմարդ,
Նրա խոստումը հապա ո՞ւր մնաց...

Ու լոեց, լոեց. ապա զարմանքով,
Սչֆերը բոցոտ, հարցրեց նրանց.
—Ո՞վ է հուզվելու հայի երգերով,
Ո՞վ է չափելու հայի վիշտն անանց:

Երկիրն են այրում և ազգը ջնջում,
«Անուշն» էլ կերթա, «Ծոներն» էլ կերթան.
Ու լսեց կարծես երագի միջում՝
Ինչպես են փլվում և՛ գյուղ, և՛ ոստան...

Ու երգը լսեց, Հակոբն էլ գնաց,
Կալվոքը ընկավ կալի եզերքին,
Իբրև մի սոխակ՝ անգուր մորթըված,
Ու կալի երգը դեռ իր շրթունքին...

— Զի՛ լինի, չե՛, չե՛. նա մեծ է, շֆեղ,
Նա իր երգն ունի, խոսքն արքայական.
Կանչեց ու դողաց. աչքերը լուսեղ
Վառվեցին մի պահ ու հետո հանգան:

Ու ներմակեցին մագերը հանկարծ,
Կարծես թե մեկից ձյուն իջավ վրան,
Սիրուն աչքերը խամրեցին հանկարծ,
Ու անգորացավ երեսի նման:

Նախ Սիամանթոն այդ բանը տեսավ,
Եվ գույգ ափի մեջ գլուխն առնելով
— Դանիե՛լ, ձայնեց, վարպետը կորավ.
Ու լացեց մանկան սրտահույզ լացով:

Վարպետը նայեց փոքրիկ իսալիչին.
Մի սրինգ գտավ. փարաջան հանեց.
— Դեռ ըստյա՞սում եմ գանգերի զարկին,
Մի՞թե գալու է դեռ ոնիր մի մեծ:

Գտավ քավշակող երգարանն հայոց՝
Մանկուր օրերի հուշը սրբազան,
Որ շափաղ տվեց ցովքով ոսկեգոծ,
Շողաց աչքերին մի աստղի նման:

— Հառա՛ջ դեպի մարտ, հառա՛ջ ի կռիվ,
Կանչեց հոգեցունց զինվորի նման,
Եվ աչքերն արյուն, մազերը խռիվ,
Ուտնեց ու նետովեց դեպի պատուհան...

— Վարպե՛տ, սուր նշաց երգիչը ֆնած
Եվ գարիւրանփից ֆնից արթնացավ,
Դողդոջ, գունաթափ, աչքերը լցված,
Հոգում խոր կսկիծ, տվայտանք ու ցավ...

Ո Ր Պ Ե Ս Վ Ե Ր Զ Ե Ր Գ

Ու անցնում էին այն հին մամբեֆով,
Որով անցնլ էր Կոմիտասն անմահ,
Վառվել, կրակվել հայրենի երգով
Հայրենի հողի, ջրերի վրա:

Մեկը տանում էր չֆնաղ գույներով
Նրա պատկերը Հառիճում կերտած,
Մեկն էլ գնում էր սուրբ երազներով՝
Նրա պատկերը հոգում դրոշմած:

Նրա երգերը պահած իր սրբտում
Դընում էր, գնում երգիչը մատաղ,
Հստակ աչքերից արցունքն էր կաթում,
Իբրև գարունփվա մափուր ցող ու շաղ:

Ու անցնում էին ուռենու մոտով,
Որ կռացել էր ջրերի վրա,
Եվ անուշ, անուշ, երազ կարոտով,
Լսում մեղմագին մըրմունջը նըրա:

Մի տղա երգեց գերանդին ուսին,
Երբ հասավ գետին, տեսավ ուռենին.

— Ուռի ես՝ կռանալ մի,
Մեր դռներն հեռանալ մի,
Յա՛ր, յա՛ր:

Ժպտացին մեղմով, երգով շողացին,
Երգիչ-նկարիչ բացվեցին նորից.
Մեծ Կոմիտասի երգը շրթքունքին
Հընձվորն էր անցնում ազատ, անթախիծ:
Արդեն գյուլ մըտան. Արթիկի ծայրին,
Խըրճիթի կըտրին, աչքը սևեռած
Արդեն հեռացող, ջահել հընձվորին,
Մի սիրուն աղջիկ երգում էր հուզված.

— Քեյե՛ր, ցոյե՛ր իմ յարը.
Գերանդին ուսին
Քեյե՛ր, ցոյե՛ր իմ յարը:
Հով ծառի տակ,
Զով ծառի տակ
Ե՛կ տղա.
Շաղովն արի,
Բաղովն արի,
Շե՛կ տղա:

Ու գընում էին, գնում գլխահալ,
Ու խորհում էին ու դռնդաղ գընում.
Վաղ լուսաբաց էր. թույ գընան նրանք՝
Մեծ Կոմիտասի երգով հըմայուն:

Ես էլ փակում եմ էջը իմ երգիս,
Դե՛հ, մնաս բարով, գուսան սըրբազան,
Թող բո կըրակը միշտ այրի հոգիս,
Իսկ նըրանք՝ խոհուն գընան ու գընան:

1945 թ. օգոստոս
Հառիճ—Լենինական

Շաղկեր և Կոմիտասի պորտրեն՝
նկարիչ՝ Հ. ՌՈՒԽԿՅԱՆԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ՝
ՍՐՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑԻ

Վ.Ֆ. 04029 Պատվեր 56. Տիրաժ 3000. տպագր. 2,5 մամ.
Հեղինակ. 1,4 մամուլ. Ստորագրված է տպագրության 21/8 1946 թ.

«Բանվոր» թերթի տպարան, Լենինական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028870

ጥብቁ 4 ቁ.

